

իր, ինչ որ Եկեղեցին ուսուցած է միշտ
սրբազան զրքերուն վաւերականութեան
և ամբողջութեան նկատմամբ: Եւ սակայն
եղեւութիւն է այս: Աւանդական քանի մը
խնդրոց վրայ այս վերադարձին մէջ մեծ
արդիւնք ունի վիկուրու. երախտապարտ
ենք ուրեմն իրեն թէ իբր որդիք հասա-
րակաց մօր՝ Եկեղեցւոյ, և թէ իբր ե-
ռանդուն զմայլողներ սուրբ Գրոց, և կը
զետեղենք երախտագիտական ծաղիկ մը
դեռ նոր փակուած շիրմին վրայ մեծ և
յարգելի ուսուցչին որ շատ բան մեզի
սորվեցուցած է զրքերովը, և շատ ալ՝
խոնարհ ու վաստակասէր կեանքին ազ-
նուութեամբը:

Հ. Ք. ԶՐԱՔԵԱՆ

ՀՈԳԻՈՅ ՅԱՐԳԸ

Բարիգի Semaine religieuse Թեւ-
թին մէջ «Հիւանդապահուհւոյ մը տեղե-
կատուութեանց» մէջ հետեւեալը կը կար-
դանք:

Բարիգի մեծ կայարանի մը մէջ բեռ-
ներու յարկածածքին տակ, ուր առաջ
նոր հասնող ծրարները կը դրուէին, հիմայ
150 վերաւորներ յարդի վրայ պառկած
են: Իրենց վիճակին համեմատ զանազան
դասերու բաժնուած են, այստեղ ութ հոգի
վերջին շունչերնին կու տան:

Հիւանդապահուհիները պատուէրները
ստանալով, իւրաքանչիւր ոք իրեն սահ-
մանուած բաժնին կ'ընթաց.

— Շատ կը նեղուիք, բարեկամս, —
կը հարցնեն վերաւորի մը:

— Այո՛, տիկին, շատ, շատ կը նե-
ղուիմ:

— Թոյլ տուէք որ վերականգնիդ փո-
խեմ:

— Լաւ... բայց կամաց... շատ կը
ցաւցնէ!

— Ո՛հ, վրանիդ միտալ մը կը կրէք...
Արիւթիւն, ուրեմն, և ցաւերնիդ նուիրե-
ցէք Աստուծոյ, Ֆրանսայի համար:

— Աստուած: Ո՛հ այո՛... Ատեն մը
հանդիսաւոր տօներուն հաղորդութիւնս կը
կատարէի... բայց երեք տարիէ ի վեր...
եբք ամուսնացայ...

Ձայնը նուաղած էր... իր վիճակը,
ճամբորդութեամբ տկարացած, անտանելի
կը դառնար, և երբ կը խնամէի զինքը,
դեռ կը շարունակէր խօսիլ ինծի հետ ցած
ձայնով իբր թէ ուզէր փախտիք մը հա-
ղորդէի:

— Բայց այսօր... կը փափաքէի խոս-
տովանիլ...

Այս որոշմանը վրայ, ոտքի ելլելով,
անկելանոցի տեսչին կը հարցնեմ.

— Կայ՞ հոս քահանայ մը:

— Դժբաղդաբար ոչ: Շատ ուշ պիտի
գայ:

Կամքիս հակառակ պէտք եմ թողու-
ղինքը, միւս վերաւորներուն ալ ծառայե-
լու համար: Փաշալեքական քանի մը խօսք
ուղղելով, կը թողում զինքը. բայց բա-
րեբարն Աստուած անոր վրայ կը հսկէր:

Անկից հեռանալուս, կը զգամ որ մէկը
զգեստէս կը քաշէ:

Մահամեծ մը փոքր մը վեր կանգնե-
լով նշանացի ինծի հետ կ'ուզէ խօսիլ:
Կարծելով թէ օգնութեան համար է, կը
մօտենամ:

Իր նայուածքը տենդոտ և աղբրսական
է, բայց խօսքը որոշ և բացայայտ.

— Տիկին, ես քահանայ եմ, կրնամ
արձակել... Զիս այն մարդուն քով տա-
րէք...

Նախ քիչ մը կը տատամսիմ, որովհետեւ
ինծի հետ խօսողին կողերը ումբի կտորէ
մը ջախջախուած են, և ամենափոքր շար-
ժուած անոր սարսափելի ցաւ կը պատ-
ճառէ:

Սակայն իր տկար ձայնը երթալով հրա-
մայական ձև մը կ'առնէ:

Կ'ուզէի արտայայտել զիտնալ զգացածս
երբ սուրբ ըմբոստութեան մը այս աղա-
ղակը արձկեց:

— Դուք որ հաւատք ունիք, չէ՞ք գիտեր թէ ինչ է հոգիի մը արժէքը... Ինչ օգուտ քառորդ ժամ մը աւելի կամ նուազ կեանքը՝ բաղդատութեամբ յատկանշական փրկութեան...

Եւ ինքնիրեն կանգնելով գերազանց հիգուով մը, կը փորձէր մինակ երթալ անոր քով զոր ազատել կ'ուզէր։ Այլևս չէի կրնար տատամսիլ, ամբողջապէս անձիս տիրելու անդրդունքի կամք մը կը զգայի։

Դիցազնը պատգաբակի վրայ դնելը, սարսափելի բան մը եղաւ. իր մարմինը երկուքի կը ծալուէր։ Յաւն անհնարին էր. քրտինքը իր դէմքը կը թրջէր և ինքը շրթունքը կը խածնէր, բերնէն զանգատ մը չհանելու համար։

Իր ընկերին խոստովանանքը կարճ տեւեց. քահանային ոյծերը արագօրէն կը սպառնէին։ Արձակման պահուն ինծի նշան ըրաւ. մօտեցայ իրեն։

— Սգնէ ինծի արձակման նշանը ընելու համար. այլևս չեմ կարող։

Եւ ես մեծ պատիւն ունեցայ այն գերազանց վայրկեանին հոգեվարք դիցազին բազուկը բռնելու։

Մահը շուտով իջաւ երիտասարդ քահանային վրայ. իր մօտ ծնրադարձ, չէի համարձակեր անոր օգնութիւն մը մատուցանել. ինծի կը թուէր թէ այն մարտիրոսին մարմնոյն դպչիլը սրբապղծութիւն մըն էր։

Վերստին բացաւ իր աչքերը, և մեղմիւ իր ձեռքը իմինիս վրայ դնելով, շնչեց։ — «Աղօթեցէ՛ք, աղօթեցէ՛ք ինծի համար, ի շնորհս Աստուծոյ»։ — Իր նայուածքը այնքան վստահ, այնքան երջանիկ էր, որ, հակառակ աստիկ կսկիծներուն, ինծի կը թուէր թէ այն հոգին արդէն կը վայելէր Աստուծոյ ներկայութիւնը։ Շատ անգամներ գոչեց. — «Երկինքը... երկինքը...» — Եւ կիսամեռ ձեռքով կը շոյէր վիրաւոր գինուորը, իր խոստովանորդին։

Փիչ վերջ հոգին կ'աւանդէր։

Հրամանատարը, որ ներկայ եղաւ այս տեսարանի վերջին մասին, ինքնաբերաբար ծուռկի գալով և արտասուալիբ աչ-

քերով ըսաւ ինծի. — «Տեսէ՛ք, այս բաները օգտակար են։ Այո՛ օգտակար են, օգտակար։ Այս հոգիները Պրահայի փրկանքն են։ Կրնայ Աստուած չնեղել մեզ և չփրկել, երբ վերը անոնք մեզի համար պիտի աղօթեն...»

ՆՇԱՆԱԻՈՐ ԱՅՅԵԼՈՒՔ Ի Ս. ՂԱԶԱՐ

Հարկաւմեայ տարեդարձ մը

Ահաւասիկ մերձեցաւ զարուհն, ծառեր սկսան զգնելու զունագեղ ծաղկալից պատմունաներն, նորադարձ ծիծռունք օդոյ մէջ կը զծնն իրենց ոլորտապտոյտ շրջաններն, և խաղաղաւէտ լճակիս հայելույն մէջ կը ցոլան արեւու ճառագայթից ծիծաղկոտ անդրադարձութիւնք։ Վենետիկ ալ կը պատրաստուի ընդունել իւր համաշխարհիկ այցելուաց խումբերը որոնք հեռաւոր սահմաններէ կը բերեն իրեն կենդանութիւն, բարօրութիւն, երջանկութիւն ու ժպիտ։ Մշտածպիտ Ս. Ղազարն ալ իւր պատերուն կարմրութիւնը զալարագեղ կանաչութեան հետ՝ կը ցուցնէ հայելանման շուրերու վրայ, և իւր ծաղկանց բոյրն ու տպագրական մամուլ ներու ճոխն այցելուներու խումբ մ'ալ կը ձգեն հոն։ Ասոնք ուխտաւորներ են զաղափարի. եւրոպեան ամենաժպտուն գեղեցկութեան մէջ հեռաւոր նսեմ արեւելքի մը փոքրիկ ծուռն կ'ուզեն տեսնել, աբեան պատմութիւններ լսած են Հայաստանի վրայ, և պատկառոտ ակնածութեամբ կը մերձենան, վերադառնալու համար յետ ամենաքաղցր տպաւորութեամբ արտերին համակուած։

Վանական միայնութիւնը, ամփոփ այլ ոչ տխուր, լռին բայց ծիծաղկոտ սրահները, մեղուաշան վաստակը միաբանից, ամենուրեք ցուլացումն կրօնական գիտական գեղարուեստական հմայքոտ զանձնութեւ, կը հեղուն հոգիներու մէջ խաղա-